

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2025 թ. որոշմամբ
«ՏԱՎՈՒՇԻ ՊԱՏՐԻԿ ՏԷՎԷՃԵԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔՈԼԵՋ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Ց ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ՏԱՎՈՒՇԻ ՊԱՏՐԻԿ ՏԷՎԷՃԵԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔՈԼԵՋ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ՏԱՎՈՒՇ ԻՋԵՎԱՆ ԻՋԵՎԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 5 -	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.1264567	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2022-09-16	
1.5 ՀՎՀՀ-ն	07601399	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)26343659	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	http://www.ijevan-colleje.org	
1.8 Էլեկտրոնային փոստը	tavushregcollege@gmail.com	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Հայաստանի Հանրապետություն		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Հայկ Բրուտյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	85	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Միջին մասնագիտական և նախնական արհեստագործական ծրագրերի իրականացում	148,482,550
8.1.2 Բրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Աշխատակիցների աշխատավարձի մասնակի փոխհատուցում	32,052,720
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	ՌԻսման վճարների իրականացում	6,044,100

9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Մեքենաներ և սարքավորումներ	701,712
	Գրասենյակային և տնտեսական գույք գործիքներ	7,822,044
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Միջին մասնագիտական կրթական գծով ուսանողական նպաստների տրամադրում	78,299,800	
Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին կրթաթոշակի տրամադրում	5,415,000	
Նախնական մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին կրթաթոշակի տրամադրում	19,003,950	
Նախնական մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում	37,435,700	
Մանկավարժների և ուսանողներին տրանսպորտի փոխհատուցում	7,375,500	
Ատեստավորված մանկավարժական աշխատողներին հավելավճարի ջրամադրում	622,600	
Վճարովի ուսուցումից ուսման վճարի տրամադրում	6,044,100	
Լեռնային Ղարաբաղի բռնի տեղահանված ուսանողներ ուսման վճարի փոխհատուցում	330,000	
Ֆրանսիայի հայկական հիմնադրամի կողմից աշխատակիցներին աշխատավարձի փոխհատուցում	32,052,720	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	186,579,370	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	186,579,370	

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն
իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 35 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Տավուշի Պատրիկ Տեվեճեան տարածաշրջանային քոլեջ»
հիմնադրամ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

27.06.2025

N 022523



ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Տավուշի Պատրիկ Տելեճեան տարածաշրջանային քոլեջ»

հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք եկթարկել «Տավուշի Պատրիկ Տելեճեան տարածաշրջանային քոլեջ» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, գուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-երի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում՝ անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Որոշակիացում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.


թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք արդյոք առկա է ղեկավարի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեկավարը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամի ղադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեկավարի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Հիմնադրամի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և Ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Լ. Հակոբյան

27.06.2025թ.



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծանոթա գրություն	(հազար դրամ)	
		2024թ.	2023թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	5	204,870	209,047
Ոչ նյութական ակտիվներ		33	48
Հետաձգված հարկային ակտիվ		1,645	2,181
<i>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</i>		<u>206,548</u>	<u>211,276</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	6	8,833	1,049
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		412	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	6,559	3,362
<i>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</i>		<u>15,804</u>	<u>4,411</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		<u><u>222,352</u></u>	<u><u>215,687</u></u>
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	200,613	205,728
<i>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		<u>200,613</u>	<u>205,728</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	1,876	868
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	2,979	1,084
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		208	33
<i>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</i>		<u>5,063</u>	<u>1,985</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		<u><u>205,676</u></u>	<u><u>207,713</u></u>
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Զուտ ակտիվներ		16,676	7,974
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		<u><u>16,676</u></u>	<u><u>7,974</u></u>

Հայկ Բրուտյան
Գործադիր տնօրեն

27.06.2025թ.



Նարինե Գրիգորյան
Գլխավոր հաշվապահ

**ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

		<i>(հազար դրամ)</i>	
	<i>Ծանոթագրություն</i>	2024թ.	2023թ.
Շնորհներից եկամուտ	11	41,777	55,286
Ուսման վարձերից եկամուտ		123,366	112,488
Այլ եկամուտներ		78	211
		165,221	167,985
Հատուցումներ աշխատակիցներին		(120,927)	(115,624)
Մաշվածություն և ամորտիզացիա		(10,242)	(11,312)
Այլ ծախսեր	12	(24,607)	(39,809)
Գործառնական գործունեությունից շահույթ/վնաս		9,446	1,240
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից		-	-
Շահույթ/վնաս մինչև հարկումը		9,446	1,240
Շահութահարկի գծով ծախս		(744)	2,149
Տարվա արդյունք		8,702	3,389
Համապարփակ ֆինանսական արդյունք		8,702	3,389

**ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

	<i>(հազար դրամ)</i>	
	Կուտակված արդյունք	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվար 2023թ.	4,585	4,585
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		
Տարվա արդյունք	3,389	3,389
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	3,389	3,389
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2023թ.	7,974	7,974
Տարվա արդյունք	8,702	8,702
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	8,702	8,702
Մնացորդը առ 31 դեկտեմբեր 2024թ.	16,676	16,676

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	(հազար դրամ)	
	2024թ.	2023թ.
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Տարվա արդյունք	8,702	3,389
Ճշգրտումներ`		
Մաշվածություն և ամորտիզացիա	10,242	11,312
Շնորհից եկամուտ	(17,995)	(35,796)
Շահութահարկի գծով ծախս	744	(2,148)
Պրամական միջոցների հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	1,693	(23,244)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր` (աճ)/նվազում	(420)	-
Պաշարներ` աճ/(նվազում)	5,109	14,068
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր` աճ/(նվազում)	1,008	(1,815)
Ստացված շնորհներ	(3,221)	10,593
Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) ղրամական միջոցներ	4,169	(398)
Վճարված շահութահարկ	(33)	(250)
Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) գուտ ղրամական միջոցներ	4,136	(648)
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(939)	(169)
Ներդրումային գործունեությունից ստացված ղրամական միջոցներ	(939)	(169)
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ		
Փոխառություններից մուտքեր	-	-
Ֆինանսական գործունեությունից ստացված/(օգտագործված) ղրամական միջոցներ	-	-
Բանկային հաշիվներում մնացորդների գուտ աճ/(նվազում)	3,197	(817)
Բանկային հաշիվների մնացորդները տարեսկզբի դրությամբ	3,362	4,179
Բանկային հաշիվների մնացորդները տարեվերջի դրությամբ	6,559	3,362

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«ՏԱՎՈՒՇԻ ՊԱՏՐԻԿ ՏԵՎԷՃԵԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔՈԼԵՋ» ՀԻՄՆԱԴՐԱՄԸ (այսուհետ՝ Հիմնադրամ) ստեղծվել է վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՏԱՎՈՒՇԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» պետական ոչ առևտրային Հիմնադրամի (պետական գրանցման համարը՝ 67.210.00734, նախկին անվանումը՝ «ԻՋԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» պետական ոչ առևտրային Հիմնադրամ, որը ստեղծվել է «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՏԵԽՆԻԿՈՒՄ» հիմնարկի (պետական հաշվառման համարը՝ 67.0050) վերակազմավորման ձևով վերակազմակերպման արդյունքում) իրավահաջորդն է:

Հիմնադրամի գործունեության գլխավոր նպատակն է միջին և նախնական արհեստագործական մասնագիտական կրթության և ուսուցման կազմակերպումը, այդ թվում՝ գյուղատնտեսական ոլորտին առնչվող որակյալ մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը, մասնագետների որակավորման բարձրացումը և կատարելագործումը: Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմաններում հիմնադրամը կարող է իրականացնել փորձարարական, մասնագիտացված մանկավարժական նախագծեր:

Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է: Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, քաղաք Իջևան, Նալբանդյան 5: Հիմնադրամը գրանցվել է 2022թ. սեպտեմբերի 16-ին, պետական գրանցման համար՝ 222'160'1264567:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, քաղաք Իջևան, Նալբանդյան 5:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի աշխատողների քանակը կազմել է 85 մարդ (2023թ՝ 82 մարդ):

Հայաստանի գործարար միջավայրը

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, նրա գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են բարեփոխվել և կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող Հիմնադրամների համար:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների ("ՖՀՄՄ") պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքի հիման վրա:

Գործառնական և ներկայացման արժույթ

Հիմնադրամի գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Հիմնադրամի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՄ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Իրական արժեքի որոշում

Հիմնադրամի հաշվապահական հաշվառման մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Հիմնադրամը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև՝

1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված),

2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),

3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք էական են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումները Հիմնադրամը ճանաչում է այն հաշվետու ժամանակաշրջանի վերջում, որի ընթացքում տեղի են ունեցել փոփոխությունները:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Որոշ համադրելի գումարներ վերադասակարգվել են ընթացիկ տարվա ներկայացումներին համապատասխանելու նպատակով:

Հասույթ

Հասույթը հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է զուտ ակտիվների աճի, բացառությամբ սեփականատերերի կողմից ներդրումների հետևանքով զուտ ակտիվների աճի:

Կառավարության կամ այլ պետական մարմնի, կամ այլ երրորդ անձանց անունից, որպես գործակալ, հավաքագրված գումարները չեն հանգեցնում հասույթների առաջացման:

Ծառայությունների մատուցումից

Երբ գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը պետք է ճանաչվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա՝ պայմանով, որ հատուցում ստանալու իրավունքը ձեռք է բերվել ծառայությունների մատուցման արդյունքում: Գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, երբ բավարարվել են հետևյալ բոլոր պայմանները.

1. Հնարավոր է հասույթի գումարը արժանահավատորեն չափել
2. Հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները հոսեն Հիմնադրամ,
3. Հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի ավարտվածության աստիճանը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ,

4. Հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կամ կատարվելիք ծախսերը:

Պայմանագրի մնացորդները

Պայմանագրային ակտիվներ

Պայմանագրային ակտիվը ի սկզբանե ճանաչվում է այն հասույթի համար, որի համար դեռևս հաշիվ չի ներկայացվել: Ծառայության մատուցումն ավարտելուց և հաճախորդի կողմից ընդունվելուց հետո, պայմանագրային ակտիվ ճանաչված գումարը վերադասակարգվում է առևտրային դեբիտորական պարտքեր հոդված:

Պայմանագրային ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքը ճանաչվում է, երբ Հիմնադրամը մատուցված ծառայության դիմաց հատուցման անվերապահ իրավունք է ստանում, այսինքն՝ միայն որոշակի ժամանակ պետք է անցնի, որպեսզի հատուցումը վճարման ենթակա դառնա:

Պայմանագրային պարտավորություններ

Պայմանագրային պարտավորությունը ճանաչվում է, եթե վճարումը ստացվել է կամ ենթակա է ստացման (որն ավելի վաղ տեղի կունենա) հաճախորդից նախքան Հիմնադրամի կողմից ծառայությունների մատուցումը: Պայմանագրային պարտավորությունները ճանաչվում են որպես եկամուտ, երբ Հիմնադրամը կատարում է պայմանագրային պարտականությունները, այսինքն՝ ծառայությունների վերահսկողությունը փոխանցում է հաճախորդին:

Ապրանքների վաճառքից

Ապրանքների վաճառքից հասույթը ճանաչվում է այն դեպքում, երբ բավարարվել են հետևյալ բոլոր պայմանները.

1. Հիմնադրամը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության իրավունքի հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը,
2. Վաճառված ապրանքի նկատմամբ Հիմնադրամը չի պահպանում ո՛չ կառավարչական շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ո՛չ էլ ըստ էության հսկողություն,
3. Հնարավոր է հասույթի գումարը արժանահավատորեն չափել,
4. Հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները հոսեն Հիմնադրամ,
5. Հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված, կատարված կամ կատարվելիք ծախսերը:

Սովորաբար, սեփականության իրավունքի հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցումը համընկնում է օրենքով նախատեսված ձևով իրավունքի փոխանցման կամ գնորդի տիրապետմանը հանձնելու հետ:

Ապրանքների վաճառքի ժամանակ դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես ծախս այն ժամանակահատվածում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

Շնորհներ

Շնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրանց կից բոլոր պայմանները և որ շնորհները ստացվելու են:

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Շնորհները, որոնց հիմնական պայմանն է, որ Հիմնադրամը պետք է գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ոչ ընթացիկ ակտիվներ, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սխտեմատիկորեն փոխանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ոչ դրամային ակտիվի ձևով ստացված շնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են անվանական արժեքով և սխտեմատիկորեն փոխանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կամ այդ ակտիվի սպառումից առաջացող օգուտներից գույրնթաց:

Եկամուտներին վերաբերող շնորհներ

Շնորհները, որոնք փոխհատուցում են Հիմնադրամի կատարած ծախսումների համար, ճանաչվում են շահույթում կամ վնասում, որպես այլ եկամուտ սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանի ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները:

Ֆինանսական եկամուտ և ծախս

Ֆինանսական եկամուտը ներառում է ներդրումների գծով տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվեգրվելուն պես կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով տոկոսային ծախսերը և փոխարժեքային տարբերություններից առաջացած վնասը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են գուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ծախս:

Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ

դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների կողմից մատուցված ծառայության դիմաց հիմնադրամի կողմից տրվող հատուցումներն են: Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- 1) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները,
- 2) հետ աշխատանքային հատուցումները,
- 3) ազատման նպաստները:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները աշխատակիցների այն հատուցումներն են (բացի ազատման նպաստներից), որոնք ամբողջությամբ ենթակա են վճարման այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը: Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են՝

- 1) աշխատավարձերը,
- 2) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), երբ ակնկալվում է, որ բացակայությունները տեղի կունենան այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան աշխատանքային ծառայությունը,
- 3) արդյունքների հետ կապված պարգևավճարները, որոնք ենթակա են վճարման այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունը

Հիմնադրամը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները չափում է չգեղջված հիմունքով և ծախսագրում է, երբ համապատասխան ծառայությունը ստացվում է:

Պարտավորություն է ճանաչվում աշխատակիցներին վճարման ենթական այն գումարների մասով, որոնց համար աշխատակցի կողմից մատուցված ծառայության դիմաց Հիմնադրամն ունի ներկա իրական կամ կառուցողական պարտականություն, որը կարող է արժանահավատորեն գնահատվել:

Շահութահարկի գծով ծախս

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն գուտ ակտիվներում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը ներառում է նախորդ տարիների վճարման ենթական հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որն ազդեցություն չունի ոչ հաշվապահական և ոչ էլ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է կիրառելով հարկի այն դրույթները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք Հիմնադրամն ակնկալում է, ունենալ երբ հաշվետու ժամանակաշրջանի վերջում իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կվերականգնի կամ կհաշվանցվի:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Հիմնադրամն ունի ընթացիկ հարկային ակտիվներ ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Հիմնադրամը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներին իրացնել գուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հիմնական միջոցներ

Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, ինչպես նաև տեղանքի վերականգման ծախսերը: Ձեռք բերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան

սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանջին միավորներ(հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցիչ փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Հիմնադրամ կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինող բաղկացուցիչ հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց օգտագործման համար մատչելի դառնալու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանի համար:

- | | |
|------------------------|-----------|
| • Գիրք և գրականություն | 1-10 տարի |
| • Տնտեսական գույք | 3-5 տարի |
| • Սարքավորումներ և այլ | 3-5 տարի |

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշտվում են ըստ անհրաժեշտության:

Ոչ նյութական ակտիվներ

Ճանաչում և չափում

Հիմնադրամի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիա և կուտակված արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումներ

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ նրանք ավելացնում են ոչ նյութական ակտիվի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Ամորտիզացիա

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ամորտիզացիայի հաշվարկը սկսվում է, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանի համար հետևյալն են.

Համակարգչային ծրագրեր

10 տարի

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճշտվում են ըստ անհրաժեշտության:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթ վնասում, բացառությամբ, եթե այն ներառվում է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Պաշարներ

Պաշարները ներկայացված են սկզբնական արժեքի և իրացման գուտ արժեքի նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է առաջին մուտքը առաջին ելք (ՖԻՖՈ) սկզբունքով և ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք ենթակա չեն Հիմնադրամի հետ վերադարձման, ինչպես նաև տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման հետ:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

Պաշարը ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

- 1) հավանական է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կհոսեն դեպի հիմնադրամ
- 2) դրա սկզբնական արժեքը կամ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Այն պաշարները, որոնց օգտագործումից կազմակերպությունը տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի ներհուսք չի ակնկալում, չեն ճանաչվում:

Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և սկզբնական չափում

Առևտրային դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում, երբ Հիմնադրամը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրային դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղկացուցիչ չպարունակող առևտրային դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

Վարկեր և դեբիտորական պարտքերը ներառում են ֆինանսական ակտիվների հետևյալ դասերը. դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, բանկային ավանդներ, դեբիտորական պարտքեր և ծախսերի հատուցման գծով դեբիտորական պարտքեր:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկը և ընթացիկ բանկային հաշիվները:

Դասակարգում և հետագա չափում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող պարտքային ներդրում, իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բաժնային ներդրում կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Հիմնադրամը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

1. Ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար, և
2. Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իարական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման պահին Հիմնադրամը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող,

Եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում՝ կառաջանա:

Ֆինանսական ակտիվներ – Բիզնես մոդելի գնահատում

Հիմնադրամը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այն գնահատումը լավագույնս արտացոլվում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Գնահատման ժամանակ դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- Պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- Բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- Ֆինանսական ակտիվների նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում որպես վաճառք այս նպատակի համար և Հիմնադրամը շարունակում է ճանաչել ակտիվները:

Ֆինանսական ակտիվներ – Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Հիմնադրամը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է անյախի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Հիմնադրամը դիտարկում է հետևյալը.

- Պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- Վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները,
- Պայմանները, որոնք սահմանափակում են Հիմնադրամի պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ (օրինակ՝ ոչ վերադարձելի ֆինանսական ակտիվից):

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիասանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար:

Ֆինանսական ակտիվներ- Հետագա չափում, շահույթ և վնաս

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները հետագայում չափում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ- Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթը կամ վնասը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների և Ֆինանսական պարտավորությունների փոփոխություն

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:

Հիմնադրամն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Հիմնադրամը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն:

Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Հիմնադրամը

կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Հիմնադրամը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որի արդյունքում միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշը չի բավարարում (օրինակ՝ փոխարկման պայմանի ավելացում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Հիմնադրամը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումի առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարած վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացնում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ընթացքում:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամն ապաճանաչում է Ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր Ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված Ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Հիմնադրամը կիրառում է այն համապատասխան հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Հիմնադրամը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:

Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Հիմնադրամն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և

քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Հիմնադրամը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արտարժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Հիմնադրամը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

Ֆինանսական պարտավորություններ

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Հիմնադրամը նաև ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:

Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Հիմնադրամն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Արժեզրկում

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական գործիքներ և պայմանագրային ակտիվներ

Հիմնադրամը ճանաչում է սպասվող պարտքային վնասի գծով պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար:

Հիմնադրամն առևտրային դեբիտորական պարտքերի վնասի գծով պահուստը չափում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով:

Երբ Հիմնադրամը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է սպասվող պարտքային վնասը, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է հասանելի առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Հիմնադրամի նախկին փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը: Հեռանկարի վերաբերյալ տեղեկատվություն չի ներառվում ֆինանսական ակտիվների կարճաժամկետ բնույթի պատճառով:

Հիմնադրամը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Հիմնադրամը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

- Հավանական չէ, որ պարտապանը ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականություններն Հիմնադրամի նկատմամբ, կամ
- Ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

Սպասվող պարտքային վնասի գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետ, որի ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Հիմնադրամը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք ակնկալում է ստանալ):

Առևտրային դեբիտորական պարտքերի կարճ ժամկետի պատճառով սպասվող պարտքային վնասը չի գեղջվում:

Սպասվող պարտքային վնասի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վնասի գծով պահուստը նվազեցնում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Հիմնադրամը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Իր հաճախորդների համար Հիմնադրամը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքի դուրսգրման քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան երեք տարի ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով որ դա ողջամիտ ժամանակահատված է: Դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելիք գումարների փոխհատուցման հետ կապված Հիմնադրամի ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Հիմնադրամը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը գեղջելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ջեղձի վերականգնումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

Վարձակալություն

Պայմանագրի սկզբում Հիմնադրամը գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն: Պայմանագիրը հանդիսանում է վարձակալության պայմանագիր կամ պարունակում է վարձակալություն, եթե այդ պայմանագրով հատուցման դիմաց՝ որպես փոխանակում որոշակի ժամանակահատվածի ընթացքում փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունք: Գնահատելու համար, թե արդյոք պայմանագրով փոխանցվում է որոշակիացված ակտիվի օգտագործման հսկողության իրավունքը, Հիմնադրամը օգտագործում է ՖՀՄՍ 16-ի վարձակալության սահմանումը:

Հիմնադրամը որպես վարձակալ

Հիմնադրամը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը ներառում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական գումարը՝ ճշգրտված վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարների մասով, գումարած կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները և հիմքում ընկած ակտիվի ապատեղակայման և քանդման, կամ վերջինիս վերականգնման, կամ դրա զբաղեցրած տեղանքի վերականգնման գնահատված ծախսումները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով՝ վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև ժամկետի ավարտը, եթե վարձակալությամբ Հիմնադրամի չի փոխանցվում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին, կամ եթե ակտիվի օգտագործման իրավունքի արժեքը չի արտացոլում, որ Հիմնադրամը կիրագործի գնման օպցիոնը: Այդ դեպքում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ընթացքում, որը որոշվում է նույն հիմունքով, որը կիրառվում է հիմնական միջոցների համար: Բացի այդ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվը պարբերաբար նվազեցվում է արժեզրկումից կորուստների չափով՝ վերջիններիս առկայության դեպքում, և ճշգրտվում է վարձակալության գծով պարտավորության որոշ վերաչափումների մասով:

Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք չեն վճարվել մեկնարկի ամսաթվին՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքով, կամ Հիմնադրամի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով, եթե այդ դրույքը չի կարելի հեշտությամբ որոշել: Որպես կանոն, Հիմնադրամը որպես զեղչման դրույք կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հիմնադրամը որոշում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, հիմք ընդունելով տարբեր արտաքին ֆինանսական աղբյուրներից ստացված տոկոսադրույքները, և կատարում է որոշ ճշգրտումներ արտացոլելու համար վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվում են հետևյալ վարձավճարները.

- Հաստատուն վճարումները, ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումները,
- Վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը,
- Գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո, և
- գնման օպցիոնի իրագործման զինը, եթե Հիմնադրամը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձավճարներն օպցիոնով նախատեսված նորացման ժամանակաշրջանի համար, եթե Հիմնադրամը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ երկարաձգման օպցիոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե Հիմնադրամը խելամտորեն համոզված չէ, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը:

Վարձակալության գծով պարտավորությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն վերաչափվում է, եթե առկա է ապագա վարձավճարների փոփոխություն՝ որպես ինդեքսի կամ դրույքի փոփոխության արդյունք, առկա է մնացորդային արժեքի երաշխիքի շրջանակներում վճարման ենթակա գումարների Հիմնադրամի գնահատականի փոփոխություն, եթե Հիմնադրամը փոխում է գնման, երկարաձգման կամ դադարեցման օպցիոնն իրագործելու իր գնահատականը, կամ եթե առկա է վերանայված ըստ էության հաստատուն վարձավճար:

Եթե վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է այս եղանակով, կատարվում է համապատասխան ճշգրտում օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքի գծով, կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև զրո:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները և վարձակալության գծով պարտավորությունները Հիմնադրամը ներկայացնում է առանձին՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Հիմնադրամը որոշել է չճանաչել օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ փոքրարժեք ակտիվների և կարճաժամկետ վարձակալությունների համար: Այս վարձակալությունների հետ կապված վարձավճարները Հիմնադրամը ճանաչում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

ՖՀՄՍ 16-ի համաձայն՝ փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, օրինակ՝ չեն արտացոլում շուկայական դրույքների փոփոխությունները, չպետք է ներառվեն վարձակալության գծով պարտավորության չափման մեջ:

Հիմնադրամը որպես վարձատու

Վարձակալությունները, որոնց ժամանակ Հիմնադրամը ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները չի փոխանցում, դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Վարձակալության ժամանակահատվածի ընթացքում ստացված եկամուտը գծային հիմունքով ճանաչվում է որպես այլ եկամուտ շահույթում կամ վնասում:

4. ԴԵՌԵՎՍ ԶԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Դեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Դեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՄ 1 փոփոխություններ),
- Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում (ՖՀՄՄ 16 փոփոխություններ),
- Մատակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմներ (ՀՀՄՄ 7 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ),
- Կովենանտով ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՄ 1 փոփոխություններ)
- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՄ 21 փոփոխություններ)
- ՖՀՄՄ S1 -ընդհանուր պահանջներ կայունության հետ կապված ֆինանսական տեղեկատվության բացահայտման համար և ՖՀՄՄ S2- կլիմայի հետ կապված բացահայտումներ:

5. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

(հազար
դրամ)

	Շենքեր և շինություններ	Մեքենաներ և սարքավորումներ	Փոխանցող հարմարանքներ	Գրասենյակային և տնտեսական գույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Ակտիվի սկզբնական արժեք						
2023թ. Հունվարի 1-ի դրությամբ	167,992	27,212	17,009	28,435	199	240,847
Ավելացում	7,604	2,475	-	10,912	-	20,991
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	175,596	29,687	17,009	39,347	199	261,838
<hr/>						
2024թ. Հունվարի 1-ի դրությամբ	175,596	29,687	17,009	39,347	199	261,838
Ավելացում	-	702	-	7,822	-	8,524
Օտարում	-	2,475	-	-	-	2,475
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	175,596	27,914	17,009	47,168	199	267,887
<hr/>						
Մաշվածություն						
2023թ. Հունվարի 1-ի դրությամբ	5,010	18,445	13,522	4,364	153	41,494
Տարվա մաշվածություն	1,516	1,610	1,760	6,389	23	11,298
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,526	20,055	15,281	10,753	176	52,791
<hr/>						
2024թ. Հունվարի 1-ի դրությամբ	6,526	20,055	15,281	10,753	176	52,791
Տարեկան մաշվածություն	1,544	1,802	1,172	5,685	23	10,226
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,070	21,856	16,453	16,438	199	63,017
<hr/>						
Զուտ հաշվեկշռային արժեք						
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	169,070	9,633	1,728	28,593	23	209,047
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	167,526	6,058	556	30,730	-	204,870

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չուներ գրավադրած հիմնական միջոցներ:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 34,789 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցները հաշվառվում են գրոյական արժեքով (2023թ.՝ 19,871 հազար դրամ):

6. ՊԱՇԱՐՆԵՐ

	31.12.2024թ.	(հազար դրամ) 31.12.2023թ.
Հումք և նյութեր	6,643	165
Փոքրարժեք կամ արագամաշ առարկաներ	12	12
Հատուկ նպատակային պարագաներ	2,178	872
	8,833	1,049

7. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՅ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

	31.12.2024թ.	(հազար դրամ) 31.12.2023թ.
Բանկային հաշիվներ	6,559	3,362
	6,559	3,362

8. ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

	31.12.2024թ.	(հազար դրամ) 31.12.2023թ.
Մնացորդը առ 01 հունվար	205,728	196,220
Շնորհի ստացում	5,111	20,820
Եկամտի ճանաչում՝		
Եկամտի ճանաչում	(10,226)	(11,312)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր	200,613	205,728

9. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	31.12.2024թ.	(հազար դրամ) 31.12.2023թ.
Կրեդիտորական պարտքեր ձեռքբերումների գծով	1,521	868
Ստացված կանխավճարներ	201	-
Վճարվելիք հարկեր և այլ պարտադիր վճարներ	154	-
	1,876	868

Հիմնադրամի ենթարկվածությունը արտարժույթի և իրացվելիության ռիսկերին առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 13-ում:

10. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

	31.12.2024թ.	(հազար դրամ) 31.12.2023թ.
Եկամուտներին վերաբերող շնորհներ	2,979	1,084
	2,979	1,084

11. ՇՆՈՐՀՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏ

	2024թ.	(հազար դրամ) 2023թ.
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	10,226	11,312
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ	31,551	43,974
	<u>41,777</u>	<u>55,286</u>

12. ԱՅԼ ԾԱԽԵՐ

	2024թ.	(հազար դրամ) 2023թ.
Կումունալ ծախսեր	8,618	5,877
Նյութածախս	11,959	31,734
Այլ ծախսեր	4,030	2,198
	<u>24,607</u>	<u>39,809</u>

13. ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Իրական արժեք

Դեկլարությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները էականորեն չեն տարբերվում վերջիններիս հաշվեկշռային արժեքներից:

Ֆինանսական ռիսկերի կառավարում

Հիմնադրամը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Հիմնադրամի ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումները:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Դեկլարությունը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի

մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են շուկայական պայմանների ու Հիմնադրամի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Տարբեր ընթացակարգերի միջոցով Հիմնադրամը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները կունենան հստակ սահմանված դերեր և պարտականություններ:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պարտավորությունները Հիմնադրամի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում առևտրային դեբիտորական պարտքերի, բանկերից ստացման ենթակա և բանկային հաշիվների մնացորդների գծով:

Բանկային հաշիվներ

2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամն ուներ 6,559 հազար դրամ գումարով բանկային հաշիվներ (2023թ-ին՝ 3,362 հազար դրամ), որն իրենից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների գծով: Բանկային հաշիվները պահվում են մեկ տեղական բանկում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Հիմնադրամի մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Հիմնադրամի համբավը վտանգելու:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրի ազդեցության: Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

2024թ.

(հազար դրամ)

	Հաշվեկշռայի գումար	Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր	Մինչև 6 ամիս	6-12 ամիս
<i>Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</i>				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,876	1,876	1,876	-
	1,876	1,876	1,876	-

2023թ.

(հազար դրամ)

	Հաշվեկշռայի գումար	Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր	Մինչև 6 ամիս	6-12 ամիս
<i>Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</i>				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	868	868	868	-
	868	868	868	-

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Հիմնադրամի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթային ռիսկ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրամադրած փոխառությունների և բանկային ավանդների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք):

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի բոլոր տոկոսակիր ֆինանսական գործիքների համար գործում էր ֆիքսված դրույք:

Հիմնադրամը չի հաշվառում ֆիքսված դրույքով ֆինանսական ակտիվները և պարտավորությունները որպես իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, ինչպես նաև չի նախատեսում ածանցյալ գործիքները (տոկոսադրույքի սվոպերը) որպես հեջավորման գործիքներ՝ իրական արժեքի հեջի հաշվառման մոդելի շրջանակներում: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի վրա:

14. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊԵՐ

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրություն իր գույքի համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Հիմնադրամի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Դատական վարույթներ

Հիմնադրամը ներգրավված չէ դատական վարույթներում և այս առումով որևէ էական ազդեցություն չի ակնկալում իր ֆինանսական վիճակի վրա:

Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

15. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Վերահսկողություն

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի անհատական կազմը սահմանում է Հիմնադրամի հիմնադիրը:

Ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում հիմնական ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը:

	<i>(հազար դրամ)</i>	
	2024թ.	2023թ.
Աշխատավարձ	<u>24,043</u>	<u>22,291</u>